


38

Ա-38

ԱԿԿՈՂՈՒՄ

ԻՆՉՊԵՍ ՊԵՏՔ Ե  
ԱՌԵՎՏՈՒՐ ԱՆԵԼ



ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ «ՀԱՅԿՈՈՊ»-Ի

ՅԵՐԵՎԱՆ

1926

06 APR 2000

Պրովետարներ բոլոր յերկրների, միացե՛ք.

38

U-38

ԿԿ

Ի. Ա. ԱԿՈՂՈՒՍ

# ԻՆՉՊԵՍ ՊԻՏԻ ԱՌԵՎՏՈՒՐ ԱՆԵԼ

ՍՊԱՌԿՈՈՂՆԵՐԻ ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒ-  
ԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Թարգ. Գ. ՆՍՁԱՐՅԱՆ



1003  
10934

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԿՈՊԻ  
ՅԵՐԵՎԱՆ 1926

05 FEB 2013  
08 ARK 30

# 1. ԱՊՐԱՆԲԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԿՈՈՊԵՐԱՑԻԱՆ

Սպառողական կոոպերացիան ժողովրդական տնտեսության շրջանակներում համար մղվող կռիվի մեջ ելակալ դեր է խաղում: Յեթե արդյունաբերության գործն է անհրաժեշտ ապրանքների արտադրումը, ապա առևտրական կազմակերպությունները գործն է հասցնել այդ ապրանքները սպառողին: Իսկ այդ պիտի աշխատել անել միջոցների ամենաքիչ մսխումով և սպառողի համար ամենամեծ հարմարությունը: 1922—23 տնտեսական տարում սպառողական կոոպերացիան ամբողջ Արևելքային Միության սահմաններում անմիջականորեն սպառողին է ծախել 420 միլիոն ուլերու ապրանքներ: 1923—24 տնտեսական տարին այդ թիվը հասնում է 1,100 միլիոնի՝ այդպիսով գերազանցելով 1918 թիվի ամենամեծ շրջանառությունը՝ 700 միլիոն ուլերին: ավելի քան 50 տոկոսով:

Սպառողական կոոպերացիայի գերը պետական արդյունաբերության հիմնական ապրանքների վաճառահանման գործում շատ նշանավոր է. կոոպերացիան վաճառում է այդ ապրանքներից՝ շաքարի 80%<sup>0</sup>, աղի 76-ից 80%<sup>0</sup>, մանուֆակտուրայի 60%<sup>0</sup>, նավթի 47 48%<sup>0</sup>:

Մանրածախ առևտրի մեջ սպառողական կոոպերացիայի մասնակցությունը 1922—23 թվին ընդհանուր շրջանառության 15%<sup>0</sup>-ն է կազմել: 1923—24-ին նրա դերը ավելի մեծացել է՝ հասնելով ընդհանուր շրջանառության 23%<sup>0</sup>-ին: Ներքին առևտրի ժողովրդական կոոպերացիայի թվական տվյալներից յերևում է, թե կոոպերացիայի մանրածախ առևտրի նշանակությունը Արևելքային Միության զանազան շրջաններում փոփոխության է չենթարկվում և հասնում է — օրինակ Լենինգրադի գյուղական շրջաններում 50%<sup>0</sup>, Սիբիրում—50%<sup>0</sup>, Նիժեգորոդի նահանգում—73%<sup>0</sup>, Կուրսկի նահանգում—42%<sup>0</sup>, Հյուսիսային կովկասում—40%<sup>0</sup>, Տվերսկի նահանգում—18%<sup>0</sup>, Ուկրաինայի նահանգում 6<sup>1</sup>/<sub>2</sub>%<sup>0</sup>:

Այստեղից հասկանալի չէ, թե ինչքան կարևոր է, վեր

ՏՐԵՍԻ ԱՌԱՋԻՆ ՏՊԱՐԱՆ

Գրանկզվար № 577      Պատվեր № 2549      Տիրամ 1500

կոոպերացիայի գործնական աշխատանքը, ինչպես նաև առևտրական քաղաքականությունը, դրվի այնպիսի հիմունքների վրա, վոր նա համապատասխանի մեր յերկրի ապրանքաշրջանառության մեջ կոոպերացիայի ունեցած դերին: Այդ դերն ավելի ևս պատասխանատու յե դառնում շնորհիվ՝ այն դիրքի, վոր գրավում է կոոպերացիան քաղաքի և գյուղի փոխհարաբերությունների մեջ: Քաղաքի արդյունաբերության ապրանքները գյուղ հասցնելով և գյուղի ապրանքները վաճառքի հանելով քաղաքում, կոոպերացիան կանգնած է նրանց մեջ (на стыке): Այդ մտքով, նայած թե կոոպերացիան վորքան կանոնավոր կգնի իր աշխատանքը, կոոպերացիայից մեծ չափով կախված է գյուղի և քաղաքի փոխադարձ կապի ամրանալը:

Այդ անհրաժեշտ և մասնավանդ այժմ, յերբ մասնավոր առևտուրն ուժեղացնում է իր աշխատանքը: Հաղթելու յե արդյոք կոոպերացիան մասնավոր առևտրին թե՛, կենսունակ չլինելով, կովի դաշտը նրան է գիջելու—այդ հարցը կոոպերացիայի առևտրական աշխատանքի հարցն է: Յեթե մրցակից չկա կողքիդ—պարզ է, վոր շատ ել դժվար չե առևտուր անելը: Բայց մասնավոր առևտրի ներկայությունը ստիպում է կոոպերացիային իր ուժերը հավաքել՝ դուրսը թյամբ և ուշադիր աշխատանքի անցնելու համար:

Մեր դժբախտությունն այն է, վոր կոոպերացիան առևտրական աշխատանքն իմացող շատ քիչ մարդիկ ունի: Պիտի մի անգամից վերջ տալ այն նախապաշարմունքին՝ իբր թե առևտուր անելը հեշտ բան է: Յեվ իսկապես թվում է, թե շատ հեշտ բան է ապրանք գնելը, մասնավանդ յեթե այն ապագուիկ են տալիս, սակայն յերբ դուրս է գալիս, վոր հասարակական փողերը կերված են և ոգուտների փոխարեն պարտատերերի պահանջներն են յերևան յեկել՝ միայն այս դեպքումն է հասկանալի դառնում, վոր առևտուր անելը շատ բարդ աշխատանք է:

1923—24 տնտեսական տարվա ընթացքում շուկան մի շարք ցնցումներ է տարել: 1923 թվի հոկտեմբերին տեղի ունեցած ապրանքների գների իջեցումը կոոպերացիային բավականին մեծ վնաս սվեց: Շատ քիչ կոոպերատիվներ իրենց 1924 թվի հաշվեկշիռները առանց փաստի փակեցին: 1924 թվի մարտի հետևյալ գների իջեցումը նորից կոոպերացիային հանկարծակի բերեց: Կոոպերացիան ստիպված յեղավ ապրանքների հաշվից փաստների հաշվին շատ մեծ գումարներ գրել: Դրան հետևեց մին-

չև հուլիսը շուկայում տեղ համեմատաբար հանգիստ գրությունը—յերբ տարվա բերքը հավաքվում էր գյուղացիական շուկայի հսկայական պահանջը ապրանքային սովի բնույթ էր կրում: Պահանջվող ապրանքների պակասությունը առաջացնում է պնունները որեցոր վատացող պայմաններ: Սրան անշուշտ հետևելու յե նորից գյուղացիության գնորդական ունակության պակասումը և առևտրական շրջանառության կրճատումը: \*)

Այսպիսի պայմաններում միայն զգուշ աշխատելը բավական չէ: Բացի առևտուր անել իմանալը, պիտի լարված ուշադրությամբ հետևել թե ինչ ապրանքների պահանջ կա, ինչ առաջադիներ կան, աշխատանքի ի՞նչ ընդհանուր պայմաններ—միայն այս կերպ կարելի յե խնդիրը լուծել: Պետք է վոչ միայն առևտրական հեշտ նախագիծներ ու ծրագրներ մշակել, այլ և պետք է կարողանալ աշխատալքի ընթացքում, հանգամանքների փոփոխությունը համաձայնեցնելով ձևափոխել այդ ծրագրներն ու նախագիծը:

Սպառողական ընկերությունները պիտի ճիշտ հիմունքների վրա դնեն իրենց գործնական առևտրական աշխատանքը և միաժամանակ ճշգրիտ կերպով վորոշեն իրենց առևտրական քաղաքականությունը:

II. ԻՆՉ ԱՊՐԱՆՔՆԵՐ ԳՆԵԼ

Սպառողական ընկերությունները՝ համաձայն իրենց աշխատանքի պայմաններին՝ ստիպված են առևտուր անել ամեն տեսակ ապրանքներով: Մի կողմից հաճախ է պատահում, վոր գյուղում վոչ մի խաճուրք չկա և ազգաբնակչությունը պահանջում է, վոր կոոպերատիվում իրեն հարկավոր ամեն մի ապրանք լինի, մյուս կողմից էլ ապրանքների զանազան տեսակների բաշխումը կոոպերացիայի զանազան ձևերի, գլխավորապես գյուղատնտեսական ու սպառողականի միջև այժմ չի իրականացված: Մինչև այժմ էլ դեռ գյուղատնտեսական ընկերությունները հոգ են տանում մասնափակտուրա ձևով բերել, իսկ սպառողական ընկե-

\*) Մեր սպառողական կոոպերացիան ևս 1923—24 թ. տնտեսական տարում անց է կացրել նույն շրջանները, միայն վոչ թե հուլիսին, այլ մեր տնտեսական տարվա վերջին՝ սեպտեմբեր—հոկտեմբեր ամիսներին: Այստեղ խոսքը Ռուսաստանին է վերաբերում:

Թարգմ.

բությունը ծախում է միս, յերկաթեղեն, գյուղատնտեսական գործիքներ և մեքենաներ:

Անկասկած է, վոր պետք է աշխատանքի սահմանափակում լինի: Այդ ողորակար կլինի թե գյուղատնտեսական, թե սպառողական կոոպերացիան: Յեւ վորքան շուտ՝ այնքան լավ թե մեկի թե մյուսի համար: Բայց քանի վոր իրերի աշխատանքը գրությունը շարունակվում է՝ այն հաշվի չառնել չի կարելի:

Յեթե լավ նայենք, թե միջին սպառողական ընկերությունը ինչ տեսակի ապրանքների առևտուր է անում, մենք կնկատենք, վոր այդ ապրանքները յոթ զանազան խմբերի կարելի է բաժանել:

1. խմբում—մանուֆակտուրա
2. » — գալանտերեյա
3. » — կաշվեղեն, կոշիկեղեն
4. » — բակալեյա—լարադային ապրանքներ
5. » — թուղթ և գրենական պիտույքներ
6. » — յերկաթեղեն, ամանեղեն
7. » — փայտեղեն (տախտակ փայտ և այլն)

Ապա յեթե հետևելու լինենք, թե ինչ հարաբերության մեջ են գտնվում այդ առաջին խմբերի ապրանքները կոոպերացիայի առևտրի մեջ՝ Հյուսիսային Կովկասի գյուղական ցանցի համար կլոր թվերով մենք կունենանք հետևյալ պատկերը:

1. Մանուֆակտուրա	50 <sup>0</sup> / <sub>0</sub>
2. Գալանտերեյա	7 <sup>0</sup> / <sub>0</sub>
3. Կաշվեղեն կոշիկեղեն	10 <sup>0</sup> / <sub>0</sub>
4. Բակալեյա-լարադային	15 <sup>0</sup> / <sub>0</sub>
5. Թուղթ և գրենական պիտույքներ	3 <sup>0</sup> / <sub>0</sub>
6. Յերկաթեղեն, ամանեղեն	10 <sup>0</sup> / <sub>0</sub>
7. Փայտեղեն	5 <sup>0</sup> / <sub>0</sub> *)
	100 <sup>0</sup> / <sub>0</sub>

\*) Մանորուբուռ.— Հայաստանի սպառողական կոոպերացիան ևս համարյա նույն ապրանքներովն է առևտուր անում, յացի վերջին (փայտեղեն) խմբից: Հարցը լրիվ չէ ուսումնասիրված, սակայն մի քանի տիպիկ կոոպերատիվների շրջանառության մեջ մանուֆակտուրան կազմում է շրջանառության 50—65<sup>0</sup>/<sub>0</sub>, գալանտերեյան 3—5<sup>0</sup>/<sub>0</sub>, լարադային ու բակալեյան ապրանքները 10—18<sup>0</sup>/<sub>0</sub>:

Այս տախտակի վրա հարկավոր է մի քիչ կանգ առնել: Ասենից առաջ մենք տեսնում ենք, վոր գյուղական կոոպերատիվներն ամենից շատ ուշք են դարձնում մանուֆակտուրայի վրա: Պարզ է, վոր այդ յերևույթը ամենից առաջ հետևանք է այդ ապրանքի համար շուկայում յեղած մեծ պահանջի, բայց անկասկած է նաև այն, վոր կան մի շարք այլ պատճառներ, վորոնք վորոշում են մանուֆակտուրայի տեղն ու դերը կոոպերատիվ սկզբնական ցանցի ապրանքների տեսակների շարքում: Սպառողական ընկերությունները հաճախ գնում են ամենահեշտ գծով բավականին ուշք չդարձնելով, իրենց կարծիքով, ավելի ծանր ապրանքներին, վորոնց հետ իրենք գործ են ունենում: Պիտի ընդունել, վոր սպառողական ցանցի հիմնական ապրանքները պիտի համարվեն մասսայական գործածության ապրանքները, ինչպիսին են աղը, նավթը, շաքարը, փստիկիբը, մի քանի շրջաններում բացի այդ ալյուրը, յուղը: Ամենամեծ ուշադրությունը պիտի դարձրվեր բակալեյա-լարադային խմբին և ապա այլ խմբերի ապրանքներին: Յեւ յեթե մենք հակառակ յերևույթ ենք տեսնում, այդ բացատրվում է նրանով, վոր մանուֆակտուրայի հետ գործ ունենալը հեշտ է: Այդ ապրանքը հետո գնացող է, վոր պակասում, վոր չորանում, վոր էլ փշրվում է:

Մենք կարծում ենք, վոր այստրվա մանուֆակտուրայի առևտուրը կոոպերատիվներում ժամանակավոր յերևույթ է և բացատրվում է ազգաբնակչության մեծ պահանջով: Բնական ընթացքով սկզբնական կոոպերատիվների ապրանքների խմբավորումները աստիճանաբար փոփոխության են յենթարկվելու և ծանրության կենտրոնը լինելու յի բակալեյա-լարադային խումբը:

Ապա, «գալանտերեյա» խմբի վերաբերմամբ պիտի ասել, վոր նրա հետ աշխատանքը շատ դժվարությունների հետ է կապված: Այդ ապրանքը պահանջում է մեծ փորձնականություն և մանրակրկիտ ընտրություն (Չոկել): Հենց այս խմբի ապրանքներն են մեծ սխալներով գնվում և կոոպերատիվը շատ հեշտությամբ գալանտերեյայով է «ապրանքակոխ» դառնում: Գալանտերեյա խումբը հարյուրավոր անուններ ու տեսակներ ունի, վորոնցից յուրաքանչյուրը բավարարում է հատուկ պահանջ: Այստեղ մասնագետ է հարկավոր, յեթե կոոպերատիվն ուզում է գալանտերեյի լայն առևտուր ունենալ: Հենց այդ պատճառով

կաշվեղենը 3-8<sup>0</sup>/<sub>0</sub>, յերկաթեղենը և այլ խմբերը շրջանառության չնչին տոկոսներն են կազմում:

գալանտերեյի առևտուրը պիտի տանել շատ կրճատված սահմաններում, տեսակների և սահմանների ամենանեղ շրջանում՝ յերբեք նրա դերը չլայնացնելով այլ ապրանքային խմբերի մեջ: Վերջապես, պիտի ուշք դարձնել յերկաթեղեն ու ամանեղեն ապրանքային խմբերին: Ճիշտ է, այդ ապրանքների առևտուրը կարծեք սեղոնային է՝ կապված տարվա վորոշ լեղանակների (գարնան ու աշնան) հետ, սակայն հենց սեղոնին այդ ապրանքները շատ ձեռնտու յեն և լավ են ծախվում: Մենք յենթադրում ենք, վոր դրանց նշանակութունը, վոր վերջին տարիներս շատ ընկած էր, աստիճանաբար մեծանալու յե գյուղական անտեսության վերականգնման ընդհանուր պրոցեսսի հետ միասին: Յեվ հենց այդ պատճառով հիշյալ ապրանքների տեղն ու դերը կոոպերատիվ առևտրում պիտի բարձրանա: Նույնը կարելի յե ասել տախտակեղենի ու փայտեղենի վերաբերմամբ: Այս ապրանքը պիտի սկզբնական ցանցի ուշադրությունն ալիլի գրավի՝ գլուղի շինարարության աստիճանական ուժեղացման պատճառով:\*)

Մոտիկ ապագայի համար մենք նպատակահարմար ենք համարում մեր սորորին ցանցի համար ապրանքների տեսակների մոտավորապես այսպիսի խմբավորում և 0/0 0/0:

1. Մանուֆակտուրա— 30 0/0
2. Գալանտերեյա 5 0/0
3. Կաշվեղեն կոշիկեղեն 10 0/0
4. Թուղթ, գրենական պիտույքներ 5 0/0
5. Բակալեյա, լարագային ապրանքներ 30 0/0
6. Յերկաթեղեն, ամանեղեն 15 0/0
7. Տախտակեղեն, գերաններ 5 0/0

100 0/0

\*) Հեղինակը հատկապես շեշտում է այս, վորովհետև ուսուսական գյուղերում տները շինվում են փայտից: Տախտակն ու գերանները շինարարության մեջ շատ մեծ տեղ են բռնում: Պարզ է, վոր մեր յերկրի պայմաններն այլ են:

\*\*) Մենք դժվարանում ենք Հայաստանի գյուղական ցանցին տալ ապրանքների գնումների նման մի ցուցակ: Պարզ է, վոր մեր յերկրի ամենաառաջին կարիքներն են

Առանձին խմբերի առանձին ապրանքները վորոշվում են ամենից առաջ այդ ապրանքների վերաբերմամբ յեղած պահանջովը: Մեծ սխալ կլինի, յեթե մենք տանելու լինենք այնպիսի քաղաքականություն, վոր բավարարվի հատ-հատ ապրանքների կարիքը, վորոնք շատ հազիվ ղեպքերում են պահանջվում: Որինակ՝ գյուղական սպառողական կոոպերատիվից էլ կարող են մի մի անգամ հարցնել քաղաքի ձեռի կոշիկներ, սակայն կոոպերատիվի շրջանառությունը պիտի հիմնել գյուղական իսկապես պահանջի վրա:

Ամերիկական վորե է առևտրական տուն, վոր մտադիր է կոշիկեղենի առևտրով ղբաղվել, իր գնումների ծրագիրը կազմելիս մեծ աշխատանք է կատարում՝ նախորոք ուսումնասիրելով շուկան: Նա սկզբից և յեթ պարզում է, թե ինչ ձեռի կոշիկներ են հարկավոր, ինչ տոկոս տրամարդկանց, կանանց և մանուկների կոշիկների պահանջ կա—և ապա միայն՝ գնումներ է կատարում և առևտուր սկսում: Այսպիսով նա շուկա յե գուրս գալիս ղինված շուկայի մասին հարկավոր տեղեկություններով, նա գուշակություններ չի անում, նա կուրորեն—շոյափելով ու անսխալա՞ն չի գործի անցնում, այլ խիստ ու նախորոք կատարված հաշվառով և հենց այդ պատճառով նա շատ քիչ ղեպքերում է սխալվում:

Մենք առևտրական գործի նման կազմակերպում չունենք, այդ մեր ույժերից ու մեր միջոցներից վեր է: Սակայն միշտ էլ կարելի յե ավելի հասարակ հաշվառում կատարել: Սա ութի ամեն մի գործակատար, վոր ապրանք է բաց թողնում, կարող է լավ հետևել, թե ինչ է պահանջվում և կարող է հաշվել, թե ինչքան է պահանջվում: Հաշվապահի ամեն ամսվա հաշիվներին պիտի կցել տեղեկություններ, թե կոոպերատիվը ամսվա ընթացքում ինչ տեսակ ապրանքներից (առանձին խմբերով) ինչքան է ծախել: Այդ տվյալները նյութ կտան, վոր կոոպերատիվի վարչությունը իմանա, թե ազգաբնակչությունը ինչ ապ-

մանուֆակտուրան, աղը, շաքարը, նավթը, լուցկին և կաշվեղենը: Բայց մեր վորոշ գավառներում հացամթերեհների առևտուրը և Երևանից հեռավոր գյուղերի մատակարարումը (հատկապես կործանված—քանդված ու վերաշինվող գյուղերում)—պիտի կոոպերատիվի ուշադրության կենտրոնում լինի:

Թարգմ.

րանքի կարիք ունի և ինչ ապրանքներ պետք է գնել: Ամեն մի սպառողական ընկերություն շատ լավ է իմանում, թե ինչ նշանակություն ունեն իր համար այսպես ասած՝ «ծանր», «դանդաղ գնացող» սեզոնային» ապրանքները: Անկախ այն բանից, վոր դա հետևանք է հարկադրական աստորտիմենտի (վոր մինչև այժմ էլ կիրառվում է պետ-արդյունաբերությունից),—պարզ է, վոր այդ ապրանքները գնվել են ու խոսնուծը լցվել այն պատճառով, վոր կոոպերատիվի վարչությունը ուշադիր կերպով չէ ուսումնասիրել պահանջը և ըստ այնմ չի կատարել իր գնումները: Յեվ այդպես աստիճանաբար, այդ «ծանր», «չգնացող» ապրանքները կուտակվել են կոոպերատիվում՝ խանգարելով նրա շրջանառության արագացմանը: Մեզ հայտնի յե՛ն դեպքեր, յե՛րբ կոոպերատիվները մեծ գումարի պատրաստի հագուստեղեն, պատրաստի սպիտակեղեն, սփռոց, անձրևակալներ և նման ապրանքներ գնելով, ստիպված են յեղել իրենց ժամկետային վճարումները դադարեցնել, վորովհետև այդ ապրանքները «դժվար են գնում», իսկ մուրհակներին, վճարելու ժամկետները վրա յե՛ն հասնում: Նման դեպքերի հետևանքը շատ վատ է լինում կոոպերատիվի համար:

Յեվ մասնավոր առևտրականները շատ լավ միջոցի յե՛ն դիմում՝ ամեն տարվա վերջում, այսպես ասած, «ե՛ծան վաճառքներ» կազմակերպելով: Բացի այն, վոր այդ միջոցով նրանք ազատվում են «քնած ապրանքներից», միաժամանակ նրանք շրջանառություն են վերադարձնում իրենց դրամական միջոցների մի զգալի մասը: «Քնած» ու «ծանր գնացող» ապրանքների նմանորինակ «զտում» մենք խորհուրդ ենք տալիս կատարել նաև մեր ստորին կոոպերատիվ ցանցին: Այդ միջոցը մի—մի անգամ կիրառելով՝ մենք կաշխուժացնենք շրջանառությունը, կապատենք մեր «քնած» միջոցները և մեր հաշվեկշիռը կառողջացնենք:

Այսպես ուրեմն՝ «ինչ ապրանքներ գնել» հարցին պիտի պատասխանել.

— Բացի շուկայի ընդհանուր դրուժյանը հետևելուց, ուսումնասիրեցե՛ք, թե ի՛նչ ապրանքներ են պահանջվում, հաշվի առե՛ք այդ պահանջը և գնեցե՛ք միայն այն ապրանքները, վոր հեշտությունը եք ծախելու:

### III. ԻՆՉՔԱՆ ԳՆԵԼ

Յերկրորդ հարցը, վոր առևտրական աշխատանքի ծրագրերը կաշվելիս ծագելու յե ընականաբար՝ այն հարցն է, թե ի՛նչքան գնել:

Այդ հարցին մենք կարող ենք պատասխանել՝ յեթե մենք ուսումնասիրենք ապրանքի շրջանառությունից արագությունը՝ նախապատերազմյան շրջանում՝ ապրանքաշրջանառությունից միջին տեղումնունը մանրածախսի մեջ հավասար եր մոտավորապես մեկ ու կես ամսվա (7—8 անգամ տարեկան): Վերջին ժամանակներս կոոպերացիայի աշխատանքը ընդհանրապես և մասնավորապես Հյուսիսային կովկասում՝ տալիս է 40—45 որ միջին ապրանքաշրջանառություն \*): Այստեղից պիտի յեղրակացնել, վոր ապրանքների մոտավորապես մեկ ու կես ամսվա պաշար սպառողական ընկերության համար նորմալ պիտի համարել:

Ավելի շատ պաշար ունենալ խանութում՝ նշանակում է «ապրանքակոխ» լինել, դանդաղ շրջանառություն ունենալ, շրջանառությունից միջոցների մեծ մասը անշարժ դրուժյան մեջ պահել—իսկ այդ բոլորի հետևանքը ժամկետային վճարումների անկանոնությունն է լինում և դրա հետ կապված այլ դժվարություններ:

Բայց ապրանքների միջին շրջանառություն 40—45 որյա արագությունը դեպքում՝ առանձին ապրանքները տարբեր արագությունը են «շրջվում»: Յեվ յեթե մի կոոպերատիվ ուզում է իր առևտուրը լավ հիմքերի վրա դնել, նա չի կարող շուտումնասիրել, թե այս կամ այն ապրանքը ի՛նչ արագությունը է «շրջվում»: Վորոշ ժամանակ ուշադիր դիտելով առևտրական շրջանառությունը՝ ամեն մի կոոպերատիվի վարչություն կարող է նկատել, թե որինակ՝ մանուֆակտուրայի շրջանառությունից արագությունը 15—20 որ է, յերկաթեղենինը 60 որ, կաշվեղեն ապրանքներինը 40 որ, լուցկին 25 և այլն: Այստեղից հեշտ է

\* ) Իհարկե, ապրանքաշրջանառությունից արագություն համար մեծ նշանակություն ունի հաղորդակցությունից միջոցները: Այնտեղ, վորտեղ յերկաթեղեն է ապրանքների տեղափոխությունից միջոցը— ապրանքաշրջանառությունը միշտ ավելի արագ կլինի, քան թե ջորիներով և ուղտերով անդափոխություն կատարելիս:

քեզրակացնել, թե ամեն ապրանքից ինչ պաշար պիտի ունենալ և ինչքան պիտի գնել:

Յե՛վ ինչքան մի ապրանքից ծախվում ե, պիտի միաժամանակ նրա անհրաժեշտ պաշարը լրացնել: Այդ լրացումը պիտի հանոնավոր կատարել—այնպես վոր, յերբեք առևտրի մեջ այդ ապրանքը չպակասի: Պիտի այնպես անել, վոր վորոշ ապրանքների քանակությունը շարունակ վորոշ նորմաներից չպակասի—նայած թե արդ ապրանքը շրջանառության մեջ ինչ տեղ ունի և ինչ արագությամբ ե շրջվում: Ապրանքաշրջանառության արագությունը միաժամանակ ցույց ե տալիս շուկայի տարողությունը: Մանուֆակտուրայի մեծ պահանջը նշանակում ե, վոր սպառողների մեջ այդ ապրանքներից ավելի շատ կարելի յի քաշխել, սպառել: Հենց այդ պատճառով պահանջի ուսումնասիրությունն ռյատեղ ել մեծ դեր պիտի խաղա: Վերջապես՝ մեծ նշանակություն ունի նաև այն, թե ինչ պայմաններով ե այդ ապրանքը գնվում: Պարզ ե, վոր յիթե՛ ապրանքը գնելիս կոոպերատիվին 30 որ ժամկետ են տալիս, պիտի այնքան ապրանք գնել, վոր ժամկետն անցնելուց առաջ դուք կարողանաք ծախել այդ ապրանքը: Այս մոմենտը մեծ ու վճռական դեր ե կատարում մանավանդ այն կոոպերատիվներում, վորոնք սեփական միջոցներ քիչ ունեն և աշխատում են գլխավորապես վարկերով:

Յեթե մի շարք ապրանքների պահանջը մշտական բնույթի ե կրում և միայն վորոշ ժամանակամիջոցներում պակասում ու ավելանում ե (մանուֆակտուրա, գալանտերեյա)—պարզ ե, վոր այդ ապրանքների մշտական վորոշ պաշար պիտի ունենալ ամբողջ տարվա ընթացքում: Ուրիշ բան են սեզոնային ապրանքները. սրանց գնումները այլ կերպ պիտի կատարել: Որինակ տանիքներ ծածկելու թիթեղը յեթե գնենք մեծ քանակությամբ աշնան շինարարական սեզոնին մի մասը կը ծախվի, իսկ մյուս մասը «կմնա» մինչև գարուն. ուրիշ խոսքով ասած՝ այդ ապրանքի արժեքը շրջանառությունից դուրս կնկնի՝ ամբողջ վեց ամսվա ընթացքում: Սեզոնային բնույթ ունեցող ապրանքի քանակը ամբողջովին կախված ե այն բանից, թե վճր ժամանակ և ինչքան ժամանակին ե գնված ապրանքը:

Կոոպերատիվի հաշվապահը գործն այնպես պիտի տանի, վոր վարչության համար պարզ լինի ապրանքի շրջանառության ամբողջ հաջորդականությունը: Յեթե վարչությունը գիտե, թե այս կամ այն ապրանքը խանութում յերբ ե պահանջ-

վում, ինչքան, ինչ արագությամբ ե ծախվում, նա կարող կը լինի իր շրջանառության միջոցները նպատակահարմար կերպով տեղավորել:

### IV՝ ՎՈՐՏԵՂ ԳՆԵԼ

Գնումների ծրագիր կազմելուց հետո՝ սպառողական ընկերության համար յերրորդ հարցն ե առաջ գալիս՝—վճրտեղ գնել: Այստեղ՝ նա ամենից առաջ հիշելու յե, վոր նա միայն հասարակ առևտրական կազմակերպությունն չե, այլ կոոպերատիվ կազմակերպությունն ե: Նրա ամբողջ գործնելիությունը պիտի ներընչված լինի այդ մտքով և սպառողական ընկերությունն այդ տեսակետի վրա պիտի հիմնի իր առևտրական աշխատանքը: Բնական ե, վոր ապրանքների համար սպառողական ընկերությունը ամենից առաջ պիտի դիմի իր միությանը: Յեթե սպառողական ընկերությունը շահագրգռված ե կոոպերատիվ աշխատանքով, սպասողի կազմակերպման գործով, ահա հենց սրանով նա շահագրգռված պետք ե լինի իր միության գոյությամբ և նրա աշխատանքով: Յե՛վ ընդհակառակը՝ միությունը շահագրգռված ե, վոր ինքն ավելի ավել կապվի սպառողական ընկերության կյանքի ու աշխատանքի հետ: Միությունը չի կարող սկզբնական կոոպերատիվ ցանցում տանել կազմակերպչական աշխատանքներ, միաժամանակ չտանելով նաև տնտեսական-առևտրական աշխատանք: Այս վերջին կապը ամենակենդանի կապն ե և միայն նա յե ընդունակ կազմակերպչական կանոնավոր ու սերտ աշխատանքի հող ստեղծելու համար:

Վերջին տարին մենք տեսանք, վոր սկզբնական կոոպերատիվները՝ վորոշ չափով կտրվելով իրենց Միությունից, ուժեղացրել եյին իրենց աշխատանքը պետական առևտրի որդանեն, քի հետ: Մենք մանրամասն այս հարցի մասին չենք խոսելու: Մի բան բոլորովին պարզ ե, վոր վորքան խնդիրը վերաբերում ե ցանցի կանոնավոր ու պլանաչափ ապրանքամատակարարման գործին, պետական առևտուրն այդ չկարողացավ հաջողությամբ լուծել: Շահագրգռված չլինելով ամբողջ ստորին ցանցի աշխատանքի հաջողության մեջ՝ նա գործ եր տեսնում միայն այն սպառողական ընկերությունների հետ, վորոնց հետ նա առևտրական տեսակետից ձեռնտու յեր գտնում գործ ունենալ: Մինչդեռ, բոլորովին պարզ ե, վոր ամեն մի սպառողական ընկերու-

թյուն կարող է իր պարտավորութիւնները կատարել համապատասխան պայմաններում: Այդ պայմանները գլխավորապես կանոնավոր ու պլանաչափ ապրանքամատակարարման պայմաններն են: Ընկերութիւնը նպատակ ունի և շահագրգռված է բացառապես կանոնավոր աշխատանք տանելու գործում: Յեւ պետական առևտրի փորձը—կապվելու կոոպերատիվ ստորին ցանցի հետ—անհաջող անցավ հենց այն պատճառով, վոր նա չկարողացավ այդ ցանցի համար կանոնավոր ու պլանաչափ ապրանքամատակարարման պայմաններ ստեղծել: Մյուս կողմից, խընդրին մտտենալով գուտ առևտրական տեսակետից՝ պետական առևտուրը, ոգտվելով շուկայում ունեցած մենաշնորհ (մոնոպոլ) դիրքից՝ հաճախ կոոպերացիային առաջադրում է այնպիսի պահանջներ, վորոնք ցանցի աշխատանքին ձեռնտու չէլին: Այսպես եր, որինակ՝ յերբ կոոպերացիային հարկադրական աստորտվեանտ ելին առաջադրում և կոոպերատիվներից շատերը, մի փոքր պարտիյա ապրանք գնելիս՝ ստիպված ելին լինում 40% քամբակեղենի ու չթեղենի հետ վերցնել 60% քաթանեղեն ու քրդեղեն ապրանքներ և զրա հետևանքն այն եր լինում, վոր կոոպերացիայի «ծանր գնացող» ապրանքները շատանում ելին ու ժամկետային վճարումների պարտավորութիւնները խախտվում: Բացի այդ՝ տրեստներն ու սինդիկատները ապրանքների հաշվեվճարման շատ ծանր պայմաններ ելին առաջարկում: Յեւ, իհարկէ, մի փոքր կոոպերատիվ, այն ել պատահական գնորդի դերի մեջ, վիճել չեր կարողանում: Նա ստիպված եր լինում կամ ընդունել այդ ծանր պայմաններն ու իր վրա տանել ուժից վեր պատասխանատվութիւն՝ փոխադարձ հաշիվների ծանր պայմաններին համաձայնելով, կամ չընդունել այդ պայմանները և առանց ապրանքի մնալ: Վերջապես՝ ելի մի հանգամանք, վորը մոտացութիւն տալ չի կարելի: Կոոպերատիվ միութիւն մեջ սպառողական ընկերութիւնն իրեն տեր ու տիրական է և զգում, իսկ սինդիկատի պահեստում նա մի պատահական ու քիչ նկատելի գնորդ է: Սպառողական ընկերութիւնն անկախացուցիչը մի անկարգ բան նկատելով միութիւն մեջ՝ բողոքելու իրավունք ունի և պահանջում է զեպի իրեն ավելի մեծ ուղադրութիւն, իսկ սինդիկատում—խնդիրն այլ կերպ է զրված. նա այնտեղ ոտար է և առանձին ուղադրութիւն պահանջել չի ել կարող:

Ապրանքամատակարարման կանոնավոր ու պլանաչափ լի-

նելը սպառողական ընկերութիւնը կարող է իրականացնել միայն իր միութիւն մեջ և միութիւն միջոցով: Հենց այդ պատճառով նրա առաջին ու հիմնական հայթհայթողը միութիւնը պիտի լինի:

Բայց կարող է պատահել, վոր միութիւն պահեստում տրվալ մոմենտին այս կամ այն ապրանքը չկա: Յեթե այդ բանի մեջ մեղավոր է միութիւնը, նրա անփույթ և անուշադիր լինելը, ապա պիտի հարց դնել միութիւնն ապարատի բարելավման մասին: Բայց լինում են դեպքեր, յերբ միութիւնն այս կամ այն պատճառով հնարավորութիւն չի ունենում այդ ապրանքը ձեռք բերելու: Բնական է, վոր սպառողական ընկերութիւնն այսպիսի դեպքերում ստիպված է լինում պահանջվող ապրանքը փնտրել միութիւնից դուրս:

Այսպիսի կանոն պիտի ընդունել. ամենից առաջ պահանջվող ապրանքը պիտի գնել միութիւնից և միայն այն դեպքում, յերբ վերջինում չկան պահանջվող ապրանքները՝ զիմել կողմնակի հայթհայթողների:

Այս դեպքում հատկապես պիտի զգուշանալ մասնավոր անձնավորութիւններից գնումներ կատարելուց: Կոոպերատիվները վերջերս մասնավորներից գնումներ են անում 10-12% \*) Բացի այն, վոր կոոպերացիային, վորպես մասնավոր առևտրի դեմ մրցողի, չի սազում մասնավորից գնումներ կատարելը, պիտի սաել, վոր մասնավորների հետ գործ ունենալը մի շարք թյուրեմացութիւնների տեղիք է տալիս: Այստեղ բացի խաբեբայութիւն սովորական դեպքերից (չափի. քաշի և այլն խաբեբայութիւն), կարևոր է, վոր ապրանքներ գնողն ունենա մեծ հաստատակամութիւն և անձնվիրութիւն, վոր վաղ թէ ուշ գնումներ ժամանակ յերևան չրեր իր անձնական շահագրգռութիւնը: Ով վոր ծանոթ է մեր կոոպերատիվների կյանքին, նա շատ լավ գիտէ, թէ ինչպես այս դեպքերը մեր սպառողական ընկերութիւններին մեծ վնասներ են հասցնում:

Հենց այդ պատճառով՝ իբր կանոն պիտի ընդունել՝ մասնավոր անձերից գնումներ կատարելուց ամեն կերպ խույս տալը: Յեթե ապրանքը միութիւնից չի կարելի գնել, ապա պի-

\*) Բարեբախտաբար մեր կոոպերատիվները մասնավորներից գնումներ են կատարում շատ չնչին տոկոս (1—5<sup>1</sup>/<sub>2</sub>).  
Թարգմ.

տի դիմել սինդիկատին կամ տրեստին: Այսպիսի գնումը թե-  
 շատ ժամանակ և թե մեծ ծախսեր և պահանջում: Յե՛վ յեթե  
 միությունը ֆինանսական կամ այլ նկատառումներով հնարա-  
 վարություն չունի հարկավոր տեսակի ապրանքներն ունենալու,  
 շատ լավ կլինի, վոր միությունից պահանջվի, վորպեսզի վեր-  
 ջինս սկզբնական կոոպերատիվ ցանցի համար կոմիսսիոն հի-  
 մունքներով գնումներ կազմակերպի: Այսպիսով սպառողական  
 ընկերությունը շատ միջոցներ կանտեսի և ավելորդ ծախսեր  
 չի անի իր գնորդին կենտրոնական քաղաքներն ուղարկելու  
 համար: Բացի այդ՝ շատ պարզ է, վոր այն գնորդը, վոր լավ չի  
 ճանաչում շուկան, գնումների պայմանները, շատ հաճախույն-  
 իսկ գնելիք ապրանքները, չի կարող այնպես հաջողությամբ  
 խնդիրը լուծել, ինչպես այդ կանի միությունը, վորն ունի լավ  
 ապրանքագետներ, վորոնք իրենց գործը շատ լավ հասկանում  
 են: Այսպես ուրեմն ամեն մի սպառողական ընկերություն թող  
 լավ մտածի միությանը կոմիսսիոն հանձնարարություններ տա-  
 լու մասին:

Սպառողական ընկերությունները սովորաբար ապրանքների  
 գնման են գնում Մոսկվա, Սարկով, Բոստով, Բաթում և այլն:  
 1924 թվի Նիժեգորոդյան տոնավաճառին հավաքվել էյին ավե-  
 լի քան 200 սպառողական կոոպերատիվների ապրանք գնողներ:  
 Յեթե հաշվի առնենք, թե այդ 200 հոգին ինչքան ծախսեր են  
 արել, ինչքան որպահանջ են ստացել, ինչ մեծ տարածություն-  
 ներ են կտրել և ինչ փոքր գումարների գնումներ են կատարել,  
 ապա մեզ համար պարզ կըլինի, \*) թե վորքան հասարակա-

\*) Յե՛վ միթե՞ նույնը չե մեզ մոտ, յերբ մի փոքր կո-  
 ոպերատիվ, Դիլիջանի կամ Լոուի-Փամբակի գնումներ է  
 կատարում թիֆլիսի կամ Բագվի շուկայում, մի կոոպերա-  
 տիվ, Եջմիածնի կամ Յերևանի գավառներից, թողնելով  
 Յերեվանը գործուղումներ և կատարում ավելի լայն  
 շուկաներից ապրանքներ բերելու համար: Միևնույն կողմից  
 է, վոր առևտրական անհաջողությունների աված խրատը,  
 այլ և կոոպերատիվ դաստիարակչական աշխատանքը աս-  
 տիճանաբար այդ յերևույթներին վերջ են տալիս:

Թարգմ.

կան միջոցներ են ծախսվել, գուցե վոչ չար դիտավորությամբ,  
 սակայն ճշգրիտ հաշիվ տեսնելու անկարողությունից:

**V ԻՆՉՊԵՍ ԳՆԵԼ**

Յեթե ուշադրությամբ հետևենք, թե ինչ պայմաններով են  
 գնումներ կատարվում, մենք կհկատենք մի շատ հետաքրքիր  
 գիծ, վորը կոոպերատիվի առևտրական պլանը կազմելու աշխա-  
 տանքի վրա եյական ազդեցություն է թողնում: Ապրանքի  
 գնման պայմանները վորոշվում են հետևյալ յերկու հանգա-  
 մանքներով. ա) թե ինչքան է այդ ապրանքից առաջարկվում  
 և թե ինչքան պահանջ կա նույն ապրանքի համար:

Արտասահմանից մենք շատ քիչ ապրանք ենք ստանում,  
 այն ել դիտավորապես մի քանի գաղութային ապրանքներ՝ (պղղ-  
 պեղ, լիմոնի թթվաու, լեղակ, բրինձ, այս տարի նաև մի քիչ  
 շաքար): Սպառողական նշանակություն ունեցող հիմնական  
 ապրանքները արտադրում է մեր պետական արդյունաբերու-  
 թյունը: Ինչքան ել նրա վերականգնումը արագ է կատարվում,  
 այնուամենայնիվ, նա մոտավորապես նախապատերազմյանի  
 արտադրության 50 % է կարողանում արտադրել: Մինչդեռ  
 հիմնական սպառող մասսան՝ մեր գյուղացիությունը, ալ դեն տըն-  
 տեսապես վերակենդանանում է և աստիճանաբար ավելի ու  
 ավելի յե ապրանքի պահանջում: 1924 թվի ոգոստոսից մինչև  
 դեկտեմբեր ամիսներն այդ պահանջը ապրանքային սովի բը-  
 նույթ ուներ, Այս մի պատճառ է, վորի շնորհիվ ապրանքների  
 գնման պայմաններն ավելի ու ավելի ծանրանում էյին: Բացի  
 այդ՝ յեթե նախկին տարիներում մեր արդյունաբերությունը  
 պետությունից ղրամական հատկացումներ եր ստանում (որի-  
 նակ՝ 1923-ին 178 միլիոն ուրբի) և ղրա շնորհիվ կարողանում  
 եր առևտրական կազմակերպություններին վարկավորել իր ապ-  
 րանքները վերջիններին տալով, ապա այժմ, ինչպես և 1924 թ.  
 դրությունը շատ է փոխվել: Պետությունն այլ ևս ղրամական  
 հատկացումներ չի անում, կամ այդ հատկացումները շատ կըր-  
 ճատել և և արդյունաբերությունն անցիլ և առևտրական հաշ-  
 վառման սկզբունքներով աշխատելուն: Այս ել յերկրորդ պատ-  
 ճառն եր, վորի շնորհիվ պետական արդյունաբերության ար-  
 տադրամ ապրանքների գնման պատճառներն ավելի յին ծանրա-  
 ցել:

10934



Այսպես որինակ՝ մանուֆակտուրան 1923 թվին բայց եր թողնվում ապառիկ 105 որ ժամկետով, ըստ վորում՝ սկզբին վոչինչ չեր վճարվում. կաշվեղեն ապրանքները նույնպես առանց կանխավճարների 90 որով, ամանեղենը՝ ապառիկ 120 որով, բակալեյան ապառիկ 75-120 որով և այլն: 1924-ից այդ պայմանները շատ են ծանրացել: Մանուֆակտուրան գնելու համար հաճախ 100 0/0 կանխիկ են պահանջում, կաշվեղենը՝ 30 0/0 կանխիկ, մնացածն ապառիկ 45 որ ժամկետով, բակալեյան գնելիս պիտի վճարել 30-50 0/0 կանխիկ, իսկ մնացածը ապառիկ վոչ ապիլի քան 45 որ ժամկետով և այլն և այլն:

Այս ել պիտի ասել, վոր ապրանքների գնման պայմաններին ծանրանալը դեռ ևս չի կարելի վերջացած համարել: Ավելի շուտ հարկավոր և յնթադրել, վոր այդ պայմանները դեռ ևս վերջնականապես չեն ձեռակերպել և վոր մոտիկ ապագան այդ պայմանների լավացման համար միտիթարական շատ քիչ քան և խոստանում: Մենք որեցոր ավելի հաճախ ենք տեսնում նախորոք վաճառմանս դեպքեր, յերբ մանվածային սինդիկատը և տրեսաները իրենց արտադրությունը 3-4 ամիս առաջուց արդեն ծախած են լինում: Ըստ վորում, այդպիսի գործարքները կնքելիս, գնորդը մտցնում և ապրանքի արժեքի 50 տոկոսը կանխավճար: Այսպիսով ստեղծվում են այնպիսի պայմաններ, վորոնց շնորհիվ ապրանք ունենալու համար մի քանի ամիս առաջ պիտի կանխիկ միջոցները ծախսել՝ նրանց կենդանի շրջանառությունից դուրս շարտելով:

Այս բոլորը միասին վեր բաժ՝ պիտի ստիպեն սպառողական ընկերությունը լուրջ մտածել այն մասին, թե ինչպես պիտի իր առևտրական գործարքներին դրամ հայթայթի:

Յեւ այստեղից առաջին յեզրակացությունը պիտի հետևյալը լինի:

**Սպառողական ընկերությունը պիտի մեծացնի իր օրջանուրյան միջոցները:** Այն յերևույթը, վոր հաճախ մեր կոոպերատիվները վոչ միայն սեփական, այլ և փխտառու միջոցներով անշարժ ու ծանր ապրանքներ են ձեռք բերում կամ անշարժ ու շարժական գույք են գնում, պիտի համարել անորյա աշխատանքի մեջ կոպիտ սխալ: Առևտրական շրջանառությունից դուրս մնացած յուրաքանչյուր կոպիկը աշխատանքի թուլացում և նշանակում:

Ապա մի ուրիշ հարց և ծագում: Ինչպես այդ միջոցները

գործի դնել: Յեթե արդյունաբերական որգանները կրճատում են վարկերը, պարզ և, վոր կոոպերատիվները միությունն ել նույնը պիտի անի, վորովհետև միությունը չի կարող կոպերատիվներին գնման ավելի ձեռնտու պայմաններ առաջարկել, քան այն, ինչ վոր նա պետարդյունաբերությունիցն և ստանում: Վերջապես բանկային հիմնարկներն ել են իրենց վարկերը սահմանափակում, ըստ վորում, հաճախ այդ կատարվում է միջոցները հավաքելու նպատակով և այնպիսի տեսգային արագությունը, վոր վարկավորվող կազմակերպություն աշխատանքներին մեծ վնաս և հասցնում:

Բացի այդ՝ փոխառու միջոցները շատ թանկ արժեն: Փորձը ցույց է տվել վոր այն կազմակերպությունները, վորոնք փոխառու միջոցներով են աշխատում՝ վարկավորվելով բանկերում, առկոսների վճարումը կոմիսիոն վարձատրությունն ու այլ ծախսերը կազմում են նրանց շրջանառության 2-2 1/2 0/0, այնինքն ճիշտ այնքան վորքան վոր նորմալ ամեն մի կազմակերպություն պիտի ծախսեր իր ամբողջ ապարատի վրան: Միայն մի յերբ կա—այն, վոր կոոպերատիվները կրճատեն փոխառու միջոցներով աշխատանքը և շատացնեն իրենց սեփական միջոցները առաջին հերթին՝ փայտազրամագրոիք:

Միաժամանակ պիտի առևտրական շրջանառության մեջն ասենը ազգաբնակչության միջոցները ավանդների նպատակավոր կանխույթների (целевые авансы) և փոխառությունների ձևով:

Յեւ վերջապես գնումները պայմաններն ի նկատի առած առևտրական ընկերություններն իրենց առևտրական ծրագրերը կազմելիս պետք է ամենամեծ ուշադրությունը դարձնեն այն ապրանքներին, վորոնք շուտ են վաճառվում, այդ ապրանքները մաստայական գործածություն ապրանքներն են:

Այս բոլորի վերջում մի անգամ ևս պիտի հիշել, վոր միջին սպառողական ընկերության համար շատ դժվար և շուկայում ինքնուրույն դուրս գալը Յեթե հնարավոր է գնումներ կատարել ավելի թեթև պայմաններով, ապա այդ հնարավոր է միայն այն դեպքում, յերբ մեծաքանակ գնումներ են կատարվում և սպառնալուրդ հետ լավ փոխհարաբերություններ են ստեղծված: Այստեղ տեղին է կրկին հիշել, վոր այս մտքով միության միջոցով կոմիսիոն հիմունքներով ապրանքներ գնելը ամենից ավելի ձեռնտու յեղանակն է առևտրական քաղաքակա-

նության համար, քան անկախ ու ինքնուրույն գնումներ կատարելը մեծ քաղաքներում ու ասպրանքային կենտրոնակետ շուկաներում:

VI. ՈՒՍԸ ԾԱԽԵԼ

Բայց և այնպես, գնումների պայմանների վատացումը ստիպում է սպառողական ընկերություններին շրջանառությունն հի կրճատել: 1924-ի նոյեմբերը մեղ ցույց տվեց, վոր Հյուսիսային կովկասում կոոպերատիվ առևտուրը 23 տոկոսով իջել է: Շրջանառության այդպիսի կրճատում մենք ունեցել ենք խորհրդային միության սպառողական կոոպերացիայի բոլոր հանրապետությունների ցանցի մեջ:

Խոզիրն այն է, վոր այժմ կոոպերացիան դեմուդեմ կանգնած է այն հակասական դրությունը, վոր ստեղծվել է մի կողմից շուկային տիրանալու և այն կանոնավորելու պահանջից և մյուս կողմից—շրջանառության բավարար միջոցների բացակայությունից: Իր սեփական դրամագլուխները բավական չեն, փոխառու միջոցների դերն էլ ընկնում է՝ շնորհիվ նրանց կրճատման—և այս պայմաններում կոոպերացիան հարց է դնում, վոր անհնարին է շուկային տիրանալու խնդիրը լուծել:

Յեվ հենց այդ պատճառով տեղին ու անհրաժեշտ է, վոր կոոպերացիան ծառայի կոոպերացման յինթարկված սպառողներին: Որ առաջ անհրաժեշտ է, վոր կոոպերացիան, վիրը հիշած հակասության պայմաններում, հրաժարվի շուկային տիրանալու ուժից վեր ու պատասխանատու խնդիրը լուծելուց, նպատակ դնելով լուծել ավելի համեստ ու հեշտ խնդիրը՝ ծառայել ու բավարարել իր անդամ փայտերերին:

Ինչպի այդ գործելակերպն է հրում կոոպերացիային ամենից առաջ հենց առևտրական աշխատանքի ֆինանսական աստար: Յեվ իսկապես՝ մի բոպե պատկերացնենք այն դրությունը, յիրը կոոպերատիվը բացառապես իր անդամների համար է աշխատում:

Յենթադրենք 5 ուրբիանոց փայր, վորին պիտի ինչ էլ վոր լինի հասցնենք ամեն տեղ, լրիվ գանձված: Ապրանքի շրջանառությունը 42 որվա արագությունը (իսկ դա միջին արագություն պիտի համարել) սպառողական ընկերությունը կարող էր այդ 5 ուրբ. ութ անգամ շրջեցնել, այսինքն՝ նրանցով կարող է տարեկան

40 ուրբու շրջանառություն անել: Հյուսիսային կովկասի յուրաքանչյուր տնտեսություն սպառողական տարածությունը 40 ից 70 ուրբլի յի: Այսպիսով՝ միայն փայլվածարը թույլ կտար սպառողական ընկերությանը, վոր նա այդ տնտեսության պահանջը բավարարող ապրանքի ալժեքի 65-70% կանխիկ վճարի իր սեփական միջոցներից: Կպահանջվեր մի փոքր վարկ միությունից կամ բանկից, վորպեսզի սպառողական ընկերությունը կարողանար բավարարել իր անդամներին, մինչև անդամ այն դեպքում, յեթե պետական արդյունաբերությունը իր ապրանքը ամբողջությամբ կանխիկ վաճառեր կոոպերատիվին:

Մյուս կողմից՝ ընկերության համար իր աշխատանքի հեռանկարները շատ պարզ կլինեն: Նա, բոլորովին ճշգրիտ կերպով հաշվի առնելով իր անդամների պահանջները՝ նրանց կարող կլիներ բավարարել՝ իր խանութներին հայթհայթելով հարկավոր քանակությամբ ապրանքներ: Այլ ևս «ապրանքակիր» լինելու դեպքեր չէին կարող լինել, քանի վոր պահանջի հաշվառման հետևանքով ավելորդ ապրանքներ չէին գնվի:

Ահա թե ինչու «հիմը ծախել» հարցին մենք պատասխանում ենք:—Ստեղծված դրություն մեջ՝ սպառողական ընկերությունը պիտի իր անդամ փայտերերին ծառայի՝ գանձելով նրանց փայլվածքներն ու այլ միջոցները: Այս չի նշանակում, իհարկե, վոր կոոպերատիվը իր դոները պիտի փակի մնացած ազգաբնակչության առաջ: Իհարկե, վոչ: Սակայն շատ պահանջվող ապրանքը, այն էլ յեթե կոոպերատիվում քիչ կա, այդ ապրանքից պիտի վաճառել բացառապես կոոպերատիվի անդամներին:

Հյուսիսային կովկասի մասին թվական տվյալներն ասում են, վոր կոոպերատիվ առևտրի միայն 30% է անդամների հետ, մնացած 70%-ը ազգաբնակչության չկոոպերացված մասի հետ է: Մյուս կողմից կոոպերատիվ ցանցը 1923 ին տիրացել էր շուկայի առևտրի 31%-ին, իսկ 1924 ին այդ տոկոսը հասել էր 40-ի: Պարզ է, վոր յեթե կոոպերացիան միայն իր անդամների հետ առևտուր անի, նրա առևտրական շրջանառությունը բոլորովին էլ չի պակասի: Ընդհակառակը, անկասկած է, վոր այդ շրջանառությունը պիտի բարձրանա, քանի վոր ազգաբնակչությունը դրդա պատճառներ կունենար կոոպերատիվին անդամագրվելու:

VII. ԻՆՉՊԵՍ ՄԱՍԻ

Յերբ հարց ե անաջ գալիս, թե ապրանքներն ազգաբնակչութեանը ծախելու համար ինչպես ծախել, ապա լավ կլինի, յեթե հիշենք հին կողմերատիվ սկզբունքը: Մայրամբը վաճառիւր տուկայի միջին գներով վերջին ավյալները սպառողութեանը աշխատանքի վերաբերմամբ ցույց են տալիս, վոր ապրանքների ինքնարժեքին հավելում ե արվել քաղաքներում 20% իսկ գյուղերում 29% \*): Հյուսիսային կովկասի մասին ավյալներն ասում են, վոր միջին հավելման ասորները 20—21 % են կազմում:

Գների ճիշտ քաղաքականութեան տանելու համար՝ պիտի հիշել մի շարք մտմենտներ:

Նախ հաշվի պիտի առնել ծախսերը: Հյուսիսային կովկասի մասին նույն ավյալները ցույց են տալիս, վոր գյուղական ցանցի ընդհանուր վաճառքի 11—12%-ը կազմում են նրա ծախսերը: Այդ գումարի մեջ են մտնում նաև ապրանքների տեղափոխութեան համար արված ծախսերը: Ընթացիկ ծախսերի այդպիսի տոկոս ունենալու դեպքում 20% հավելում անելը մենք բոլորովին նորմալ ենք գտնում, վորովհետև կարևոր ե վորոշ սղուտի կուտակում՝ կոտպերատիվը, ապահովելու համար հնարավոր կորուստներից, վորոնք կարող են լինել գների իջեցումից, կամ այլ վնասներից \*\*): Հենց սղուտների բացակայութեան պատճառով եր, վոր 1923 թվի հոկտեմբերի ե 1924 թ. մարտի գների իջեցման շրջանում շատ կոտպերատիվների սղխատանքները խախտվեցին ե շատ մամանակ եր հարկավոր այն կրկին պերականգնելու համար:

\*) Այս 0/0 0/0 այսոր արդեն չափազանց բարձր պիտի համարել: Հայաստանի կոտպերացիան այժմ արդեն հավելում ե անում 12—20%: Թարգմ.

\*\*) Մենք այդպիսի բարձր հավելումը բոլորովին թույլատրելի չենք համարում: Ընդհանուր շրջանառութեան 4—5 % յեթե սղուտի կուտակում ե, մենք այդ արդեն կոտպերատիվի համար նորմալ ենք համարում: Ավելի հավելումների դեպքում կոտպեացիան հագիվ թե իր մո՞ծ ու պատասխանատու գերը կատարել կարողանա, այն ե շուկայի գները կանոնավորի ու մասնավոր առևտրի հետ մրցի: Թարգմ.

Հավելումների մեծութեունը վորոշող յերկրորդ մտմենտը՝ պիտի համարել շրջանառութեան մեծութեունը ու արտադրութեունը: Առևտրական գործնական ու նպատակահարմար քաղաքականութեունը պահանջում ե վոչ թե բարձր ու մեծ վերադիրներ, այլ արագ շրջանառութեուն. 100 փութ շաքարի վաճառքը փութին 1 բութի հաշվելով կա ո նույն հետանքը, ինչպիսի հետանք տալիս ե 200 փութի վաճառքը, փութին 50 սկան կոպեկ հաշվելով. նայած թե շաքարը ինչպիսի արագութեամբ ե վաճառվում: Հենց այդ պատճառով՝ լավ աշխատող սպառողական կոտպերատիվը պիտի ձգտե վոչ թե բարձր հավելումներ (վերադիրներ) անել, այլ պիտի ձգտե մեծացնելու ե արագացնելու շրջանառութեունը, ի հարկե, նորմալ հավելումների քաղաքականութեուն վարելով:

Հավելումներն անչափ մեծացնելը, բացի առևտրական գործնական պատճառներից անհնարին ե ե շատ ուրիշ պատճառներով: Կոտպերատիվի դիրքը գյուղում, նրա հասարակական նշանակութեունը, նրա դերը, քաղաքի արտադրած ապրանքները գյուղին հասցնելու խնդրում — այդ բոլորը ստիպում են կոտպերատիվի գյուղում վոչ միայն վաշխառուական քաղաքականութեուն չը տանել, այլ ե ընդհակառակը, կատարել գյուղական շուկայի գների կանոնավորողի դեր: Ի հարկե, չի կարելի մի ծայրահեղութեունից մյուսին անցել: Ապրանքների հավելումները պիտի նորմալ տոկոսների սահմանից չանցնեն, վոչ ել շատ ցածր լինեն:

Այստեղ կարևոր ե հիշել ես մի մտմենտ, վոր շատ կարևոր ե կոտպերացիայի գործնական աշխատանքների համար: Դա այսպես ասած զեղչերի խնդիրն ե: Բոլորովին կարիք չկա այդքան հաճախ կիրառելու զեղչերը անել կոտպերատիվի հաստատուն գներից: Բացի այն՝ վոր այդ զեղչերը խառնում ու խճճում են կոտպերատիվի հաշիվներն, այդ զեղչերի քաղաքականութեունը չի կարելի սմուր կերպով մինչև վերջը տանել: Կոտպերատիվ անդամների գնումներին տարեկան մի կամ յերկու անգամ պարգևատրելու սխտեման, (պրեմիա տալը) կոտպերատիվ առևտրի պահանջներին ավելի յե համապատասխանում ե ավելի նպատակահարմար ե կիրառել:

Սակայն պիտի կարողանալ առանձին ապրանքների հավելումներն այնպես անել, վոր հավելումների միջին տոկոսը անփոփոխ ու մշտական լինի: Դժբախտաբար մեր կոտպերատիվ-

ները ապրանքների գնահատման ժամանակ բոլորովին կամա-  
յական քաղաքականութիւնն են վարում: Պարզ է, վոր այդպիսի  
քաղաքականութիւնից լավ հետեանքներ չի կարելի սպասել:  
Մասնավոր առևտրականը լավ է հասկանում, վոր յեթե մի ապ-  
րանք կարելի յէ փաստով վաճառել, մի ուրիշ ապրանքի վրան  
կօրելի յէ կարգին հավելում անել—ստացվում է, իհարկէ, շատ  
նորմալ հետեանք: Յեթե շաքարը, նավթը, աղը պահանջում են  
շատ չնչին հավելումներ անել, ապա գալանտերի յի նկատմամբ  
թույլատրում են հավելումների ավելի մեծ տոկոսներ: Ընդհա-  
նուր առմամբ հավելումների խնդրում ամեն մի ապրանքի առան-  
ձին վերաբերմունքով պիտի մտասնալ:

Հիտեյալ խնդիրը—վաճառքի գների միատեսակութիւնն է  
բոլոր գնորդների համար: Անհրաժեշտ է, վոր խառնութի վարելը  
ձեռքի տակ ունենա ապրանքների գների հաստատուն ցուցակ:  
Գնորդի կասկածը, վոր նրան ապրանքը կարող են ավելի բարձր  
գներով ծախել, առևտրին շատ մեծ փոս է տալիս: Գինն ի ցու-  
ցակը կոպերատիվում պիտի գոյութիւն ունենա վորպէս մի  
անվիճելի կանոն և խանութի կառավարելը իր առևտուրը տա-  
նելու յէ համաձայն այդ ցուցակի մեջ նշանակված գների:

Կոոպերատիվ առևտրի գործնական խնդիրները շարքում չը  
պիտի մոռանալ մի մոմենտ ևս: Կոոպերատիվների բալանսները  
(հաշվեկէիտները) ցույց են տալիս, վոր կոոպերատիվներն մի-  
ջոցների մի զգալի տոկոսը շարունակ ցրված ու փոշիացած դրու-  
թյան մեջ է գտնվում դանազան անձանց ու հիմնարկութիւննե-  
րի մոտ: Ապառիկ առևտրի այժմ գոյութիւն ունեցող սիստեմը  
վոչ մի դեպքում չի կարելի հանդուրժել: Յեթե քաղաքներում  
բանվորական վարկավորումը թույլատրելի կարելի յէ համարել,  
քանի վոր վարկերը ապահոված են բանվոր երի ու ծառայողնե-  
րի աշխատանքի հիմնարկի կողմից,—գյուղերում այդ քաղաքա-  
կանութիւնը ամենավճակաւ ձեռով պիտի վերջ տալ: Նույն իսկ  
քաղաքներում վարկավորման քաղաքականութիւնը կոոպերա-  
ցիային խոշոր փաստներ է տալի, իսկ գյուղական գործնական  
աշխատանքը ցույց է տալիս, վոր վարկավորումը գյուղում  
տևողական քնույթ ունի և ապառիկները գանձելը շատ դժվար է:

Այս խնդրում պիտի առաջնորդվել հետեյալ հիմնական կա-  
նոնով: Առևտուրը պիտի անել բացառապէս կանխիկ հաշվով:  
Շատ քիչ ժամանակ է հարկավոր, վոր ազգաբնակչութիւնն ըմ-  
բռնի, թէ նման քաղաքականութիւնը տարվում է հասարակա-

կան գործի շահի տեսակետից. և այլ ևս դադարի կոոպերատի-  
վին այս մասին վոր և է պահանջ առաջադրելուց:

**ՅԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

Յեթե մեր շուրջը նայելու լինենք և կյանքին ուշադիր դի-  
տենք, յեթե ուշադիր լսեք, թէ ինչի մասին է աղվկում  
ու ալեկոծում մեր յերկիրը, չի կարելի չզարմանալ, թէ ինչ-  
պէս նա հսկայական ուժ ու ձգտում է գործ դնում տնտեսական  
շինարարութեան համար, չի կարելի չհավատալ, վոր նա ա-  
ռողջանում է, կանգնում է և նոր կենցաղի, նոր ձևերի մեջ ա-  
ռողջ տնտեսական ուժ է լցնում:

Յե՛վ հենց այս պատճառով մեզնից յուրաքանչյուրի դերը  
—վոր աշխատանք ենք տանում տնտեսական շինարարութեան  
մեջ—ավելի պատասխանատու յէ: Կանգ առնել թեր այսորվա  
նվաճումների վրա—կնշանակի շարժման ընդհանուր ալիքի մեջ  
խեղդվել, կնշանակի չհասկանալ կոոպերատիվ շարժման ա-  
նելիքներն ու ապագա հեռանկարները: Պիտի շնորհք ունենալ  
բոլոր ուժերը լարելու, պիտի կիրառել անցյալի ամբողջ փորձը  
և գիտութիւնը, վորպէսզի հնարավորին չափ արագ ու հնարա-  
վորին չափ լրիվ իրականացնենք ու լուծենք այն խնդիրները,  
վորոնք կյանքի կողմից մեզ են առաջադրվում և իրենց անհա-  
պաղ լուծումն են պահանջում:



## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

I. Ապրանքաչրջանառությունը և կոտակերպիան . . . . .	3
II. Ի՞նչ ապրանքներ գնել . . . . .	5
III. Ի՞նչքան* գնել . . . . .	11
IV. Վ՛րտեղ գնել . . . . .	13
V. Ի՞նչպես գնել . . . . .	17
VI. Ո՞ւմ ծախել . . . . .	20
VII. Ի՞նչպես ծախսել . . . . .	22
Ցեղրակացություն . . . . .	25

« Ազգային գրադարան



NL0236167

54. 825

ԳԻՆՆ Ե 25 ԿՈՊ.